ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ,ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԳՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋՀՋՄ-ՆԳ-ԳՀԱՊՁԲ-20

ք. Ջերմուկ «28» փետրվարի 2020թ.

Ջերմուկի համայնքապետարանը,ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից,և Ա/Ձ Արարատ Բաղալյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Հննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունման ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2646520(երկու միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Ջերմուկի համայնքապետարան	Ա/Ձ Արարատ Բաղալյան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	ք.Ջերմուկ,Շահումյան 1/31
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Ջերմուկ մ/ճ
Հ/Հ 900362040272	Հ/Հ 16049000919001
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ 76850514
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	Տնօրեն՝ Ա.Բաղալյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	44621150	Ջրատաքացուցիչ կաթսաներ/ջուր եռացնող բոյլեր,20լ/	Էլեկտրական թեյնիկ, ջուր եռացնող սարք/բոյլեր/, պատրաստված է չժանգոտող պողպատից,տարողությունը 20 լիտր, արումը 220վ: Պրոֆեսիոնալ:	հատ	66000	66000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
2	44621150	Ջրատաքացուցիչ կաթսաներ/ջուր եռացնող բոյլեր,30լ/	Էլեկտրական թեյնիկ, Ջուր եռացնող սարք/բոյլեր/, պատրաստված է չժանգոտող պողպատից,տարողությունը 30 լիտր,լարումը 220վ: Պրոֆեսիոնալ:	հատ	76000	76000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
3	38431570	Ջեռուցիչ սալիկներ/ էլ.սալիկ, 2 տեղանոց/	Էլ.սալիկ, 2տեղանոց,կողքերը չժանգոտվող պողպատից,ներքևում՝ վառարան ,Լարումը - 380վ,Հզորությունը – 15.8 կվտ,չափսերը 550*950*950 մմ: Պրոֆեսիոնալ:	հատ	510000	510000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
4	39221240	Սպասքի չորանոցներ	Սպասքի չորանոց ներժից, Պատրաստված է չժանգոտվող	հատ	118000	236000	2	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	2	Պայմանագրի կնքման օրվանից 20

			պողպատից,եռահարկ,չ ափսերը՝ 46*90*h1850 Պրոֆեսիոնալ:							օրացուցային օրվա ընթացքում
7	39121200	Սեղաններ /մանկական, կլոր/	«Սեղան» կլոր, Սեղանը պատրաստվում է 18 մմ հաստությամբ բարձրորակ լամինացված ԴՍՊ-ից,բարձրությունը 50 սմ նախատեսված 3-6 տարեկան 4 երեխայի համար: Սեղանի երեսի տրամագիծը 70սմ, եզրերը կլորացված, իսկ եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ով(PVC-0,4մմ), եզրաժապավենով:Սեղանը ունի 4 ոտք, ոտքերը պատրաստված են 18 մմ լամինացված ԴՍՊ-ից և ամրանում են երեսին լամինատե գոտիներով, երկաթյա անկյունակներով և դետալներով: Բոլոր կոնստրուկցիոն դետալները հավաքված են երկաթյա անկյունակներով,փոքր ներփորվող դետալներով, ամրացված են բարձրորակ սոսնձով և հեղյուսամանեկային պտուտակներով: Սեղանի գույնը համաձայնեցում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային	հատ	17800	35600	2	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	2	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
8	39121200	Սեղաններ /մանկական, կիսակլոր/	«Սեղան» կիսակլոր, Սեղանը պատրաստվում է 18 մմ հաստությամբ բարձրորակ լամինացված ԴՍՊ-ից,բարձրությունը 50 սմ նախատեսված 3-6 տարեկան 4 երեխայի համար: Սեղանի երեսի տրամագիծը 70սմ,մի կողմից ներս ընկած՝կիսակլոր,,եզրեր ը կլորացված,որոնցից 4-ը հավաքվում է վերը նշված կլոր սեղանի շուրջ և դառնում է երիցուկ ծաղկի տեսքով ընդհանուր պատկեր իսկ եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ով(PVC-0,4մմ), եզրաժապավենով:Սեղա նը ունի 4 ոտք, ոտքերը պատրաստված են 18 մմ լամինացված ԴՍՊ-ից և ամրանում են երեսին լամինատե գոտիներով, երկաթյա անկյունակներով և դետալներով: Բոլոր կոնստրուկցիոն դետալները հավաքված են երկաթյա անկյունակներով,փոքր ներփորվող դետալներով, ամրացված են բարձրորակ սոսնձով և հեղյուսամանեկային պտուտակներով: Սեղանի գույնը համաձայնեցում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ	հատ	17800	213600	12	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	12	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
11	39138120	Աթոռ փայտյա	Աթոռ մանկավարժի, Աթոռը նախատեսված է մեծահասակների համար, փայտյա (տեղական հաճարի բնափայտից լավ հարթեցված,) անկյունները կլորացված, հղկված, գույնը բնական լաքապատ: Նստատեղի չափերը 40*40 սմ, նստատեղի բարձրությունը 40 սմ նստելու համար հարմար կորությամբ,փափուկ նստատեղով: Հենակը պատրաստված է3-4 փայտյա մատներով: Հենակի բարձրությունը հատակից 80 սմ է: Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է երկաթյա դետալներով, շիպերով և բարձրորակ սոսնձով՝ նախատեսված փայտի համար: Նստատեղերը ամրացված է բարձրորակ սոսնձով և մեխերով, եզրերը մշակված են: Ոտքի հաստությունը 2/4 սմ ,2 կողային ոտքերը իրար միանում են երկուական մատերով 2/3 սմ հաստությամբ: Առաքումը և տեղադրումը ըստ	հատ	16800	100800	6	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	6	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
16	38311300	Էլեկտրոնային տեխնիկական կշեռքներ/հատակի/	Կշեռք էլեկտրոնային, Չափսերը՝ 34*34*6սմ,մետաղական հենքով,արտաքին հարթակը՝մետաղական, առավելագույն կշռում է 35 կգ,միանում և անջատվում է ավտոմատ:/	հատ	16000	32000	2	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	2	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
17	39121450	Սեղան՝ արդուկի, մետաղյա կարկասով	Չափսերը 120*38 սմ,մետաղյա հենքի վրա,ծածկված է 1սմ հաստությամբ սպունգով,վրայից պատված բամբակյա հաստ կտորով:	հատ	22000	66000	3	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	3	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
18	39111190	Բազկաթոռներ	Մանկական բազկաթոռ, Կտորը՝ անփայլ վիլյուռ,խիտ գործվածքով ,Չափսերը՝50*40*50սմ,նստատեղի չափսերը՝ 30*30սմ,հատակից մինչև նստատեղ բարձրությունը՝ 20 սմ,բարձիկները բարձրորակի,միջուկը սպունգ,բամբուկի մանրաթել,Արտաքին տեսքը մուլտֆիլմի կենդանիների պատկերներով: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	54000	378000	7	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	7	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
19	39711350	Մսաղաց	Կիսապրոֆեսիոնալ մսաղաց, Լարումը –	հատ	120000	120000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյա	1	Պայմանագրի կնքման

			220վ,Հզորությունը – 900վտ,Դանակի արագությունը – 190պտ/ր,Արտադրողականությունը – 150կգ/ժ,Չափերը – 450*300*400մմ,Քաշը – 27կգ					կ 2/3		օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
20	44112660	Վարագույրների քիվեր	Երկտեղանի ,պատրաստված մդֆ – ից: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Քանակը և չափսերը/160 սմ-1 հատ,200սմ-12 հատ,210սմ-4 հատ,215սմ-2 հատ,230սմ-1հատ/	մետր	4200	170520	40,6	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	40,6	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
21	39141120	Դարակներով պահարաններ/կոշիկների համար/	պահարանը պատրաստվում է 18 մմ փայլուն բարձրորակ, լամինացված ԴՍՊ-ից, h145*138*50սմ չափսերով,4 դռնանի,ներսից բաժանված լինի մեջտեղից հավասար 2 կեսի,ներսից յուրաքանչյուր կեսը բաժանված լինի 5 հավասար դարակների, Անկյունները կլորացված, իսկ կողային մասերը եզրակալվում են ՊՎԽ-ով (PVC-0,4 մմ)եզրաժապավենով: Բոլոր կոնստրուկցիոն դետալները հավաքված են երկաթյա անկյունակներով և փոքր ներփորվող դետալներով, ամրացված են բարձրորակ սոսնձով և հեղյուսամանեկային պտուտակներով:Պահար	հատ	105000	105000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			անի գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
23	39711120	Սառցարան	ուղղահայաց Տարողությունը 270-300 լ, Նվազագույնը ունենա 7 դարակ, Խնայողությունը՝A++, DE FROST, խցիկի սառեցման հզորությունը 11 կգ/օր Ծախսը՝245կվտ/տարի Սառեցման առավելագույն ջերմաստիճանը -24 աստիճան ցելսիուս:	հատ	230000	230000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
24	39721200	Սառնարան	Սառցախցիկով Տարողությունը 100 լիտրից ոչ պակաս Խնայողությունը՝A+, Ծախսը՝ 113կվտ/տարի Սառեցման նվազագույն ջերմաստիճանը -18 աստիճան ցելսիուս: Սառցախցիկի սառեցման հզորությունը 4կգ/օր	հատ	88000	88000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
25	39121420	Տակդիր /հեռուստացույցի համար/	Պատրաստված է 18 մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից չափերը հ60*50*40սմ, առանց դռների,բաժանված լինի	հատ	20000	40000	2	ք. Ջերմուկ, Ձախափնյա կ 2/3	2	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			2 հավասար մասերի , արտաքին երևացող բոլոր եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ով(PVC-0,4մմ), բոլոր կոնստրուկցիոն դետալները հավաքված են երկաթյա անկյունակներով և փոքր ներփորվող դետալներով, ամրացված են սոսնձով և հեղյուսամանեկային պտուտակներով; Գույնը համաձայնեցում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
26	44411300	Լվացարան/մեկ տեղանոց,մեկ դռնանի/	Պատրաստված է 18 մմ հաստությամբ փայլուն, բարձրորակ լամինացված ԴՍՊ-ից չափերը h90*50*50սմ, 1 դռնանի է: Արտաքին երևացող բոլոր եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ով(PVC-0,4մմ), դուռը ունի 2 բարձրորակ ծխնիներ և 1 բռնակ; Զգեստապահարանի բոլոր կոնստրուկցիոն դետալները հավաքված է երկաթյա անկյունակներով և փոքր ներփորվող դետալներով, ամրացված են սոսնձով	հատ	30000	30000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			և հեղյուսամանեկային պտուտակներով; Գույնը համաձայնեցում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը տեղում 3 տարվա ընթացքում:							
27	39714100	Օդափոխիչներ	Օդափոխիչ համակարգ Նախատեսված 30 քմ տարածքի համար՝ հզորությունը 170-190վտ, արտադրողականությունը՝ 500-700 խմ/ժ, Արագության կարգավորման ռեժիմը ոչ պակաս 3-ից: Չափսերը ոչ պակաս 90*55սմ/Լ/Խ/, Չժանգոտվող մետաղից:	հատ	149000	149000	1	ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3	1	Պայմանագրի կնքման օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա մարտի 19-ը:

ԳՆՈՐԴ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362040272
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արարատ Բադալյան
ք.Ջերմուկ,Շահումյան 1/31
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Ջերմուկ մ/ճ
Հ/Հ 16049000919001
ՀՎՀՀ 76850514
Տնօրեն՝ Ա.Բադալյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«28»փետրվարի 2020թ. կնքված
ՋՀԶՄ-ՆԳ-ԳՀԱՊՁԲ-20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	44621150	Ջրատաքացուցիչ կաթսաներ/ջուր եռացնող բոյլեր,20լ/	... %	... %	66000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	2646520
2	44621150	Ջրատաքացուցիչ կաթսաներ/ջուր եռացնող բոյլեր,30լ/	... %	... %	76000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
3	38431570	Ջեռուցիչ սալիկներ/ էլ.սալիկ, 2 տեղանոց/	... %	... %	510000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
4	39221240	Սպասքի չորանոցներ	... %	... %	236000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
7	39121200	Սեղաններ /մանկական, կլոր/	... %	... %	35600	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
8	39121200	Սեղաններ /մանկական, կիսակլոր/	... %	... %	213600	... %	...	...	...	...	...	...	...	...	

							%	%	%	%	%	%	%	%	
11	39138120	Աթոռ փայտյա	... %	... %	100800	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
16	38311300	Էլեկտրոնային տեխնիկական կշեռքներ/հատակի/	... %	... %	32000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
17	39121450	Սեղան՝ արդուկի, մետաղյա կարկասով	... %	... %	66000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
18	39111190	Բազկաթոռներ	... %	... %	378000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
19	39711350	Մսաղաց	... %	... %	120000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
20	44112660	Վարագույրների քիվեր	... %	... %	170520	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
21	39141120	Դարակներով պահարաններ/կոշիկների համար/	... %	... %	105000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
23	39711120	Սառցարան	... %	... %	230000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
24	39721200	Սառնարան	... %	... %	88000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
25	39121420	Տակդիր /հեռուստացույցի համար/			40000										

			... %	... %		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
26	44411300	Լվացարան/մեկ տեղանոց,մեկ դռնանի/	... %	... %	30000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	
27	39714100	Օդափոխիչներ	... %	... %	149000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	

ԳՆՈՐԴ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362040272
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արարատ Բադալյան
ք.Ջերմուկ,Շահումյան 1/31
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Ջերմուկ մ/ճ
Հ/Հ 16049000919001
ՀՎՀՀ 76850514
Տնօրեն՝ Ա.Բադալյան

/ստորագրություն/
Կ.Տ